ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Լրագրիս գնայ՝ սր և իցէ հասցէով յայտարարութիւն պատրաստ է վճարել տողը տպուած 4 պարի հարիր 1 նպատակ արծաթ։

Հրատարակվում է լրագիրս ուր, ի մի թիվը՝ Տարեկան բաժանորդագրութիւն ընդունի ի 6 րուբլի։

ՁՈՏԱՅ · ՏԱՐԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16. 1863 ԱՄԻ №40.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մեղու Հայաստանի, քաղաքական, ազգային և բանասիրական լրագիրը 1864ին էլ կը հրատարակվի նոյն ուղղութեամբ և ընթացքով, ինչպէս ներկայ տարւոյս մէջ, միայն այն զանազանութեամբ, որ եթէ տորադրողաց թիւը բաւական լինի, ուրեմն և միջոցները կը ներին, կ՚մեծացնէ իր թերթը։ Այս ևս պարտք ենք համարում ասել, որ առանձին ուշադրութիւն պէտք է դարձնվի առաջիկայ տարին քաղաքական և ազգային մասներին վերայ։

Բաժանորդագրութեան դինն մնալու է, թէ Թիֆլիզի մէջ և թէ արտաքոյ սորա, վեց ռուբլի արծաթ։

Տորադրվել ցանկացողները կարող են դառնալ իրան խմբագրին կամ Պ. Համբարձում Էնֆիաճեանցի մաղազիան և կամ Պ. Յահակ Տէր Միքայելեանցի և ընկ. դրավաճառանոցը, որոնք դեներալ Արծրունու Գալերէումն են, Թիֆլիզի մէջ. իսկ դրսի քաղաքներից կամ գեղերից ցանկացողները կարող են ուղղակի դիմել գրութեամբ իրան խմբագրին կամ հրատարակչին և կամ մեր արժանապատիւ գործակալներին, որոնց յայտնելով մեր շնորհակալութիւնը ներկայ տարւոյս մէջ քաշած նեղութեանց համար, կ՚խնդրենք առաջիկայ տարին էլ յանձն առնուլ կատարելու նոյն դժուարակիր պաշտօնը։

Փոստայի և Թիֆլիզի մէջ տուն հասցնելու ծախսերն էլ խմբագրատան վերայ է։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Լհհերի կարծիքական նամակը իրանց բարեկամներին։

«Opinion Nationaje» լրագիրը, որնոր Լհհայ ազգաստամբութեան առանդնեն կոչակիցն է, մի նոր նամակ է հրատարակում, որի խորութիւնը կասկածաւոր է երևում։ Ահա այն նամակը, «Լհհաստանի բոլոր բարեկամներին։ Վաղուց արդէն Եւրոպան իրրև մի անկենդան մարմնոյ վերայ տրտմութեամբ նայում էր Լհհաստանի վերայ. որնոր կորցրել էր իր նախկին զօրութիւնը, բայց յանկարծ հեռուից և բոլորովին մոռացումն այն երկրում, ուր ազգի պատիւը և խիղճը պէտք է համառձակեին երկու ազգերի Լհհերի և Ֆրանսիացիների յիշատակները։ Լհհաստանը—դիակ է, ասում էին ազգերը։—Սուտ է, պատասխանում էր Լհհը. դի-

ակից արիւն չէ վազում: Հառաչանք, սպառնալիք, հարչարանք, և այնպիսի գոհաբերութեանց լուրերը, որոնք մարդկային զօրութիւնից վեր են, Եւրոպայի ազգերի ուշադրութիւնը դարձրին այս նահատակ ազգի վերայ, որոնք կամենում էին ձեռք բերել իր առաջվան անկախութիւնը: Այն ժամանակ ազգերը ապստակեցին, «Լեհաստանը մեռած չէ»: Նա դեռ ևս կորած չէ, կրկնում էին դուք, Ֆրանսիական ազգի ազնիւ ներկայացուցիչներդ, ազգի որի ամենալաւ յատկութիւնների դուք կենդանի պատկերներն էք: Եւ ձեր ձայնը հնչեց մեր սրտերի մէջ, իբրև կոչումն դէպի մեր փրկութիւնը և ազատութիւնը: Մենք ասացինք մեր զինակից եղբայրներին, «Սէրը դէպի Լեհաստան եղել է միշտ Ֆրանսիայի բարեյական աղնուութիւնը և այս ազնուութիւնը նրանից չէ կարելի խլել այլապէս, բայց է նրան իրան սպանելով, երբ նա բոլորովին կ'զրկվի յառաջադիմութեան և ազատութեան հոգիից: Մենք պատրաստ և յամենայնի հաշտակամ Լեհաստանի որդիքս, մենք պատրաստ ենք այն երկրի, որտեղ թրջած է ծերերի և մայրերի արտասուքով, մարտիրոսների և դիւցազների արիւնով, խրկում ենք ձեզ մեր սրտաբուղխ շնորհակալութիւնը ձեր եղբայրական մասնակցութեան համար մեր պատերազմի մէջ»: — Գժուար թէ այսպիսի զրուցածները ազդեցութիւն ունենան:

«Journal des Debats» ի թղթակցութիւններից:

«Journal des Debats» ի մէջ գրում են հոկտեմբերի 10-ից. «Մեր Բերլինի թղթակիցը հաւատացնում է, որ Պրուսսիայի սրքունիքը առաջարկել է իր միջնորդութիւնը վիեննայի, փարիզի, Լոնդոնի և նոյնպէս էլ Ռուսաց սրքունիքներին, նրանց հաշտեցնելու և նոցա մէջ եղած անհամաձայնութեանցը վերջ տալու համար, որոնք ծագում են նոցա մէջ Լեհաստանի խնդրի մասին: Ասում են, թէ այս առաջարկութիւնը եղել էր դեռ օգոստոսի 15-ին: Այս առաջարկութիւնը չընդունվեցաւ կամ գոնէ ընդունվեցաւ այնպիսի պայմաններով, որոնք բոլորովին ոչընչացնում էին Պրուսսիայի դիտաւորութիւնները: Բանակցութեանց մէջ, որոնք լինում էին այս մասին, ամէն կողմից այնպիսի հանգամանքներ և առիթներ առաջ բերվեցան, որոնք բոլորովին հակառակ էին իրերի ընթացքին: Հաւատացնում են, որ Բերլինի սրքունիքը, սեպտեմբերի սկզբին, ինքն կամենալով հաւաստանալ, խրկեց գործակատարներ Լեհաստան, ամենայն հարկաւոր տեղեկութիւնները հաւաքելու համար: Նոցա գործակատարները էին զինուորական սպաները և հիւպատոսները. սոքա կատարեցին իրանց տուած յանձնարարութիւնները և հոկտեմբերի 13-ին ներկայացրին իրանց հաւաքած տեղեկութիւնները:

Մեր վիեննայի թղթակիցը ասում է, որ Աւստիայի սրքունիքը մի և նոյն դիտաւորութիւնը ունեցաւ և կամեցաւ իմանալ իրերի իսկական դրութիւնը. նա խրկեց վարշավա լոհիմ և փորձառու գործակատարներ, որոնք նոյնպէս հոկտեմբերի 9-ին հաղորդեցին իրանց հաւաքած տեղեկութիւնները: Մեր թղթակիցները հաղորդեցին մեզ թէ Պրուսսայի և թէ Աւստրիական գործակատարների հաղորդած տեղեկութիւնները, որոնք այնքան նման են միմեանց, որ կարծես, թէ մի աղբիւրից են ծագում: Մինչև անգամ կարելի էր մտածել թէ արդիօք այս երկու սրքունիքները դիտաւորութեամբ նման չեն ցոյց տալիս իրանց տեղեկութիւնները, թէ իսկապէս իրերի դրութիւնը միակերպ է ազգիլ տէրութեանց գործակատարների վերայ էլ: Այս տեղեկութիւններից առաջ եկած եզրակացութիւնը այն է, որ Ռուսաց տէրութիւնը, ապստամբութիւնը ճնշելու համար, դիտաւորութիւն ունի աւելի մեծ զօրութիւն 'ի գործ դնելու, քան որքան մինչև ցայժմ գործածել է: Գործակատարները ասում են, որ Ռուսաց բանակը, պէտք է աւելի զօրանայ նոր օգնական զօրերով, որոնք հոկտեմբերի վերջերին Լեհաստանում կ'լինեն: Այն ժամանակ Ռուսաց զօրքի թիւը, որոնը այժմ 100,000 է, կ'հասնի մինչև 180,000 ի Լեհաստանի մէջ: Գեներալ Բերգի գործողութիւնները թեթևացնելու համար, Աւգուստովի գաւառի զինուորական կառավարութիւնը յանձնվել է Մուրավիվ գեներալին: Վերջապէս, ասում են, թէ գեներալ Բերգին տուած է իշխանութիւն Լեհաստանը զանազան պատերազմական նահանգներ բաժանել, եթէ միայն այս միջոցը նա կարևոր կ'համարէ»:

«Times» արևմտեան տէրութեանց միջամտութեան մասին:

Շատ հազիւ է պատահում որ մի անյաջող ձեռնարկութեան մասնակից եղողները, նորա վերջանալես էլ, նոյնպէս բարեկամ մնան, ինչպէս նրան ձեռք տալու ժամանակին էին: Մեկը լինում է շատ կրակոտ, միւսը չափազանց սառն, մեկը շատ շտապող և միւսն չափազանց դանդաղ: Ազգերը անյաջողութիւնից զերգառած, կամենալով իրանցից հեռացնել պատասխանատուութիւնը, շատ անգամ մոռանում են իրանց առաջվան յարաբերութիւնները և հաշիւները, որոնց հիման վերայ միացան ներդործելու որևիցէ գործքի համար: Մի ազգը քննութեան տակ է գցում միւսի գործողութիւնները անցքերի հիման վերայ և յայտնի բան է առանց դժուարութեան գըտնում է տեղիք նրան յանդիմանելու համար: Մարդոց այս անհրաժեշտ բնաւորութիւնը պէտք է խլեր մեզանից ամենևին ցանկութիւնը որևիցէ ձեռնարկութեան մէջ մտնելու, որովհետև մեր առաջին կայ ապագա-

ՎՃԱՐՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ա. Ոսկանյանի անվան հրատարակչություն

Հայաստանի Հանրապետության կառավարությունը հրատարակչական նոր ձեռնարկ է ստեղծել՝ հայ գրականության և մշակույթի լավագույն նմուշները ժողովրդին հասանելի դարձնելու նպատակով։ Հրատարակչությունը կոչվում է Ա. Ոսկանյանի անվան՝ ի պատիվ մեծ գրողի, որի կյանքի մեծ մասն անցել է Վաղտավճենյ գյուղում։

Հրատարակչության առաջին գրքերը լույս կտեսնեն 1815 թ. մայիսին։ Դրանցից են Ոսկանյանի ընտրված երկերի երեք հատորները, Ղազարոս Աղայանի պատմվածքների ժողովածուն և Ավետիք Իսահակյանի քնարերգության ընտրանին։ Գրքերը կվաճառվեն ամբողջ Հայաստանում, ինչպես նաև Վրաստանում, Ռուսաստանում և Ամերիկայի հայ գաղթօջախներում։

Հրատարակչության տնօրեն է նշանակվել գրականագետ Արտավազդ Մելիքյանը։ Նա ասել է, որ հրատարակչությունը ոչ միայն գրքեր կհրատարակի, այլև կազմակերպելու է գրքի տոներ և ընթերցողների հանդիպումներ գրողների հետ։

Ա. Ոսկանյանի անվան հրատարակչության առաջին գրքերը լույս կտեսնեն 1815 թ. մայիսին։ Դրանցից են Ոսկանյանի ընտրված երկերի երեք հատորները, Ղազարոս Աղայանի պատմվածքների ժողովածուն և Ավետիք Իսահակյանի քնարերգության ընտրանին։ Գրքերը կվաճառվեն ամբողջ Հայաստանում, ինչպես նաև Վրաստանում, Ռուսաստանում և Ամերիկայի հայ գաղթօջախներում։

Հրատարակչության տնօրեն է նշանակվել գրականագետ Արտավազդ Մելիքյանը։ Նա ասել է, որ հրատարակչությունը ոչ միայն գրքեր կհրատարակի, այլև կազմակերպելու է գրքի տոներ և ընթերցողների հանդիպումներ գրողների հետ։

Ա. Ոսկանյանի անվան հրատարակչություն

Հայաստանի Հանրապետության կառավարությունը հրատարակչական նոր ձեռնարկ է ստեղծել՝ հայ գրականության և մշակույթի լավագույն նմուշները ժողովրդին հասանելի դարձնելու նպատակով։ Հրատարակչությունը կոչվում է Ա. Ոսկանյանի անվան՝ ի պատիվ մեծ գրողի, որի կյանքի մեծ մասն անցել է Վաղտավճենյ գյուղում։

Հրատարակչության առաջին գրքերը լույս կտեսնեն 1815 թ. մայիսին։ Դրանցից են Ոսկանյանի ընտրված երկերի երեք հատորները, Ղազարոս Աղայանի պատմվածքների ժողովածուն և Ավետիք Իսահակյանի քնարերգության ընտրանին։ Գրքերը կվաճառվեն ամբողջ Հայաստանում, ինչպես նաև Վրաստանում, Ռուսաստանում և Ամերիկայի հայ գաղթօջախներում։

Հրատարակչության տնօրեն է նշանակվել գրականագետ Արտավազդ Մելիքյանը։ Նա ասել է, որ հրատարակչությունը ոչ միայն գրքեր կհրատարակի, այլև կազմակերպելու է գրքի տոներ և ընթերցողների հանդիպումներ գրողների հետ։

կ'դանվի մեր գրացիների (ֆրանսիացիների) ասպետական քաջութիւնը մեր սառն անզօրծունէութիւնից։ Մենք յոյս ունինք, որ այս հանգամանքը կ'համոզէ ամէնուն, որ ապագայումը մարդիկ, որոնք բացի դասդարկ խօսքերից, ուրիշ ոչինչ միջոց չեն կամենում կիրառել գործ դնել որևիցէ գործքի համար, հանդէս չդուրս գան ու բանի մէջ չխառնվին»։

Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Շահերի աչքումը Հայ անուան հետ կապուած է հարստութեան գաղափարը։ Ամենքը, Հայերի վերայ խօսելիս, միշտ ասում են, Հայերը հարուստ են, փող շատ ունին։ այս ինչ անձն այսքան հարստութեան տէր է, այն ինչ անձն այսքան կալուածներ ունէ, որոնք այսքան տարեկան արդիւնք են բերում, ֆլանը այս գործքի մէջ է, որնոր նրան մեծ արդիւնք է տալիս, այս ինչ անձինք այս տարի հայի կամ ձկան և այլն փոդրիադն են առել, ու այսքան դադրում կ'ստանան և այլն և այլն։ եւ յիրաւի այսպէս էլ է, մեր չէ կարելի ասել, որ չկան բաւական ֆլան ֆլաններ, որոնք նշանաւոր դումարների տէրը լինին, ուրեմն ամէն մէկը առանձին առանձին առած հարուստ են։ Բայց մենք ամենևին չենք ներել մեզ ասել, թէ Հայերը, այսինքն Հայոց ազգը կամ թէ չէ որևիցէ հայ հասարակութիւն հարուստ է։ Գիտեմ պէտք է հարցնէք, թէ ինչու՞։ Մի՞թէ ղորղինակ թիֆլիզի, շուշու կամ նոր Նախիջևանու և այլ հայ հասարակութիւնները, որոնք այնքան հարուստ անդամներ ունին, աղքատ են։ Այո՛, կ'պատասխանենք մենք. աղքատ են, որովհետև չունին հասարակաց հարստութիւնք, որոնք միայն են հաստատուն և միշտնջենական դումարներ կամ կայք։ Այն հարստութիւնները, որոնք մասնաւորների սեպհականութիւնք են, ոչինչ նշանակութիւն չունին հասարակութեան համար, որովհետև անհատատ բաներ են, լինելով որևիցէ մասնաւորի իշխանութեան տակ, որնոր կարող է նրան հետ վարվել, ինչպէս իր կամքն կ'լինի, կամ ինչպէս նրան կիրքերը վարվել կ'հրամայեն։ Այս հարստութիւնները առ հասարակ, մանաւանդ մերոնց ձեռքումը, մեր այժմեան վիճակի մէջ, միշտ կարճատև են և շուտ կորչում ինչպէս շատ կենդանի օրինակներ առատ կ'լինի ամէն մարդ։ Մեր մէջ դժուար կ'դանվի հարստութիւն, որն որ անցած լինի գոնեա մինչև երրորդ ցեղը, առանց նուազելու։ Ի՞նչ օգուտ է տեսնել կամ քաղել հասարակութիւնը կամ ազգը այսպիսի հարստութիւնից. և ոչինչ։ Ինչու՞ համարձ է հարստութիւնը, եթէ նա երկարատև չէ և օգուտ չէ բերում ընդհանուրին։ Ամենքի հարստութիւնը, որնոր անօգուտ է ընդհանուրին, բացի ինքեանից, մանաւանդ մեր ազգի այժմեան առանց ուղղութեան վիճակի մէջ, ուրիշ բան չէ, եթա որուամ մի քանի անխոհեմ և իրանց ինչ լինելը չհասկացող ու թոյլ բնութեանց տէր մարդոց կրքերին միայն բաւականութիւն է տալիս։ Այս հարստութիւնը այսօր կայ, եղուց չկայ։ Այսօր մեկը հարուստ է, եղուց նորա որդին կամ թոռը հայի կարօտ է մնում։ Ուրեմն մասնաւորների հարստութեամբը մի հասարակութիւն կամ ազգ հարուստ կոչվել չէ կարող։ այլ նա այն ժամանակ միայն այս անունը արդարութեամբ կրել կարող է, երբ նորա հասարակական հարստութիւնքը և կայքերը շատ կ'լինեն։ Մինչև մի հասարակութեան ամէն վիճակի անդամներն էլ թէ մարմնապէս և բարոյապէս քաղցած և ծարաւ մնալու վտանգից ազատ չեն, այնպիսի հասարակութիւնը հարուստ չէ կարող կոչվել։ Մինչև որ մի հասարակութեան մէջ ամենքը թէ հարստացը և թէ աղքատը, թէ առողջը և թէ տկարը չեն կարող իրանց պիտոյքը բաւարարվին լինել, այնպիսի հասարակութիւնը չէ կարող հարուստ հարմարվիլ։ Այսպէս եթէ մեր Հայերը կամենում են հարուստ լինիլ, ուրեմն և ազատ աղքատութեան ամէն շղթաներից, պէտք է, աշխատեն գտնել հասարակական հարստութիւններ, որոնք մշտնջենաւոր են, այնքան որքան հասարակութիւնը և ազգը մշտնջենաւոր են, օգտաւէտ են, որովհետև շատերին շահ կ'տան, ազատվել են աւելի, որովհետև մի մասնաւորի իշխանութեան և կամքին ենթարկված չեն. և վերջապէս երկրիս երեսին սոքա են այն դանձերը, որոնց ոչ գողերը կարող են մօտենալ և ոչ ցեցը ապականել, որովհետև նոցա տերերը և պահապանները շատ են։ Այժմ գիտեմ պէտք է հարցնէք, թէ ինչ են այդ հասարակական կոչված հարստութիւնները։ Սոքա են այն հարստութիւնները, որոնք հաւասարապէս օգտաւէտ են ամենքին, թէ հարստին և թէ աղքատին, մեկին այսօր, միւսին եղուց, երրորդին մեկ տարիից, չորրորդին գուցէ տասն տարիից կամ աւելի և, բայց էլի միշտ ամէն մեկը ստանում է նրանցից իր մասը։ Այս հարստութիւններն են հասարակաց ազգութեան տեղիները—Աստուածոյ տաճարները, հասարակաց դպրոցները, գրադարանները, տաքսաւանոցները, որբանոցները, հիւանդանոցները, թատրոնները, այլևայլ բարեգործական և ուսումնական կամ վաճառականական ընկերութիւնները, և այլն, որոնց ամէն մեկն էլ անուամբ հաւասարապէս իր ծառայութիւնները հասարակութեանը։ Երբ բոլոր այս բաները կունենայ մի հասարակութիւն բարեկարգ վիճակի մէջ, նա արդարութեամբ կարող է կոչվել հարուստ, ինչու. որովհե-

եւ նորա ամենատեսակ անդամներն էլ կ'գանեն իրանց ապահովութիւնը: Ուսման կարօտը կ'գանէ իր ուղածը բարեկարգ դպրոցների մէջ. աղքատը ստիպված չէ լինիլ մուրալու հաց կամ իր այլ պիտոյքը լցնելու համար հայթհայթելու այնպիսի միջոցներ, որոնք կարող են նորա մէջ սպանել մարդուս վայելուչ ղեպազմուճքները, կորը, կաղը եւ այլ ցաւագար անդամները հասարակութեան հարկաւորութիւն չեն ունենալ մասնաւորին ծանրութիւն լինել կամ առանց հոգատարութեան մնալ, որնոր անպատուութիւն է մարդկութեան եւ անարգանք, որբերը առանց հոգատարութեան չեն մնալ, ուրեմն եւ մանուած չեն լինել բաղդի բերմանքին, նոյնպէս էլ արհեստագէտ, ուսուցիական եւ այլ անդամներն էլ վերջապէս կ'գանեն միջոց իրանց ամէն պիտոյքները լցնելու եւ ազատ մնալու կարօտութիւնից կամ որևիցէ անյարմարութիւնից կեանքի մէջ: Մեր ասածների ճշմարտութիւնը տեսնելու համար դարձնենք մեր աչքը զորօրինակ Թիֆլիզում կամ Նախիջեւանում հայ հասարակութեանց վերայ եւ դնենք նորա վիճակը: Մենք աշկարայ տեսնում ենք, որ նորա մէջ շատ կան այնպիսի մանուածոր անձինք, որոնք կարող են հարուստ կոչվել, որովհետեւ արծաթ, ոսկի կամ կայքեր շատ ունին: Թողնենք միջակ կարողութեան տէր մարդոց եւ աղքատներուն, որոնց վերայ խօսել էլ հարկաւոր չէ, եւ վեր առնենք այս հարուստներուն եւ տեսնենք, արդեօք կարողանում են նոքա իրանց հարստութեամբը լցնել իրանց բոլոր բարոյական եւ նիւթական կարեւոր պիտոյքները իրանց հասարակութեանց մէջ: Ամէն մարդ էլպէտք է մեղ բացատական պատասխան տայ: Այսօրվան օր այս ամէն հարուստ կոչվածներն էլ դրեթէ գանգատում են, թէ չդիտեն ինչ անեն իրանց որդոց կրթութեան եւ ուսման համար, որնք ամէն մարդու համար անհրաժեշտ կարեւոր պիտոյքներ են: Փող ունեն, պարոն չկայ, վարժապետ չկայ, դաստիարակ չկայ. ո՞րտեղից առնէ. ասենք բերել տուեց մէկին Փարիզից կամ Լոնդոնից կամ Պետերբուրգից. բայց լաւ է, եթէ այս ապագրած անձն էլ յարմար եւ յաջողակը դուրս գայ: Վերջապէս մէկին երկուսին ապագրից. ո՞րտեղից առնէ ամէն առարկաների վարժապետներ, ամէն հասակի համար յարմար դաստիարակներ: Ահա այստեղ աշկարայ երեւում է հասարակութեան աղքատութիւնը. հարուստ է մէկը, որդի ունի, չգիտէ ի՞նչ անէ, աղջիկ ունի. չգիտէ ինչպես կրթէ. ստիպված պէտք է լինի բաղդի բերմանքին յանձնել իր այն հարստութիւնը, որնոր ամէնից թանկագինն է նորա սրտի համար, եւ գնոր ամէնից աւելի հարկաւոր է բաղդի ճանկերից ազատ պահել: Երբ հարուստը չէ կարող ապահովացնել իր հարստութեամբը իր որդոց բարոյական եւ մտաւոր վիճակը եւ լցնել սոցա պիտոյքները, էլ ինչո՞ւ համար է նորա հարստութիւնը. լաւ ուտել, խմելու ու իր մարմինը պարարտացնելո՞ւ համար. բայց սորա համար չարժէր էլ ամենևին մեծ մեծ չարչարանքների ու վտանգների ենթարկվել ծովեր ու երկիրներ շրջել հարստութիւն դիզելու համար, եթէ սա կարողանալու չէր մարդուս բարոյական եւ մտաւոր պիտոյքներ լցնելու: Տասն տարի կերակուր ուտող հարուստը իր ուտելովը մարդութեան մէջ ամենևին բարձր չէ ցամաք հացով կըշտացող մշակից, եթէ միայն չէ գերազանցում նրան իր կրթութեամբ եւ լուսաւորութեամբ. Ապրշումի եւ թաշէ շորերով զարդարված հարուստը մարդութեան մէջ ամենևին բարձր չէ հնոտիք հագած ջուր կրողից, եթէ միայն բարոյապէս չէ գերազանցում նրան:

Բայց եթէ մի հասարակութիւն կ'ունենայ հասարակաց հարստութիւնք, նորա ոչ թէ հարուստ, այլ եւ աղքատ անդամներն էլ կարող կ'լինին, ամէնքն էլ իրանց համեմատ լցնել իրանց բոլոր պիտոյքները: Ուրեմն մեր հայերին հարկաւոր է աշխատել դիզելու աւելի հասարակական գանձեր, որոնց արդիւնաւոր աղբիւրները միշտ անսպառ կ'մնան ամէնքի համար: Ուսումի թնդ չմտածէ հայը, երբ նրանից մի հասարակական բանի համար փող առնեն, թէ կորած է իր տասածը, ոչ. այլ տայ համոզած լինելով, որ այն տուածը աւելի հասատատուն եւ ապահով գանձ է իր համար. քան իր մօտ մնացածը. թող մտածէ, որ այն տուածը գուցէ որդոց որդի նրան շահ կ'տայ, այն ինչ իր մօտ պահածը գուցէ իր թոռին էլ չհանի:

Այսպէս ահա շատ անգամ պատահել է լսել մեղ, որ երբ դարձել են մեր հարուստներից մի քանիսին փող ուղղելու կամ եկեղեցու շինութեան համար կամ մի դպրոցի համար եւ կամ մի այլ բարեգործական նպատակի համար, միշտ բացատական պատասխան են տացել: Այս հարուստները, իրանց անհատացողութեամբ, կարծում են, թէ իրանց տուածը պէտք է կորչի, որովհետեւ գուցէ իրանք անձամբ նրանից շահ քաղելու չեն: Նոքա ասում են, մենք այս ինչ եկեղեցու ժողովուրդ չենք կամ այն ինչ դպրոցում մենք ոչ որդի ունինք եւ էլ աղջիկ. բայց այն չեն մտածում, որ գուցէ իրանք այն եկեղեցին են գնում, որի վերայ ոչ իրանք եւ ոչ էլ իրանց պապերը ոչ մի ծախս չեն տարել. կամ այն դպրոցի մէջ նոցա որդիքը կամ աղջկերքն են ուսանում, որի վերայ նոցա տհմից ամենևին ոչինչ չէ ծախել: Թող մտածեն միանգամ այն հարուստները, որ այսպիսի հանգամանքների մէջ իրանք մուրացկան են դառնում մի կողմից եւ միւս կողմից ուրիշներ զրկում են այն միջոցներից եւ պիտոյքներից, որոնք նոցա տուած դրամը պէտք է հոգար: Ուրեմն

թող վայելեն այնպիսի աղանները մուրացկանութեան պատիւը, ու իրրև աղքատներ լուռ ու մունջ կենան հասարակաց գործքերի մէջ ու չխորհուրդ խեղճերի վերայ:

Ա՛ռ ու տուր, ասում է առածը, և ոչ թէ ա՛ռ ու կուլ:

ՓԱԽՉՑԻ

Դաբաղ Ղազոի մասլահաթի կիսատը.

Մեր հիմիկվայ գահանէքը շատ խիճճ էլ ին: Նըբանց փուղ ճարիլն ախկըտի փուղ մօտ անելմէն աւելի վընէչէ թափառութին չունէ: Իփոր մեր գահանէքն իրանց ուտիլ խըմելու դարդն էլ չին ունենայ, իփոր կուշտ կուլեն ու վաւնչէչի վըայ ածկ չին ունենայ, կուլի վաւր էն վախտը մեր հարկաւոր բաներու համա փիքր անին:

Մեր հիմիկվայ գահաներու դրըստելու համա ու էտուումէն դէնը օրինաւոր գահանէք բահամ բերելու համա, կօսէ, երկու բան պիտի. մէկ՝ վաւր մէ մինճ ուսումարան պիտի բաց ըլի մեր աէրաէրացու ու վարթապետացու մարթկերանց համա, մէկ էլ վաւր գահաներու համա պիտի տօնըւղ նըշնըվի: Էս երկուսնէվէտ, մինճ ուսումարանն էլ ու տօնըւղ նըշնիլն էլ կօսէ, խիտ հարկաւոր է միզ համա, թէ գուզինք վաւր էտուումէն դէնն էլայ լաւ լաւ գահանէք ու վարթապետներ ունենայ: Հիմիկվայ մեր գահաներուն էն մինճ ուսումարանը, վաւր ասում ինք, չի վըայ հասնի. տօնըւղ կի հիմնակէվէտ դրանց համա վաւր նըշնըվի, թէ շատ չէ, քիչ էլայ կու դըրսակ դրըանց: Մէկ եաս սաէն, քառասուն տարի ու իմուտ կի Աստուձ օղորմած է, թէ մեր ասածնիրը կատարվի, մեր քաղաքը դիմի էն ուսումարանեմէն դուս էկած գահաներով կու լըքցըվի:

Մեր նէրսէս Հոքէուր — Տէրը, Աստուձ օղորմի իր համքրի բերնով, նրա օխանգէն անպակաս ասնէ միզմէն. մեր ասկումէն, —նա լաւ դիդացիլ է, վաւր աէրաէրացու տըղերանց համա խիտ հարկաւոր է ուսումարանը. ասիլ է ու շինիլ է էլ մեր էսգանցի Հասու շիոլէն: Փանի՞ Հոքէուր—Տէրիր ինք ունեցի մինք էս մօղիկ ժուգերուումը, վաւր էկիլ ին ու գընացիլ ին ու իրանց անուամնիրն էլ յիդենէրուն ին տարի, ամա էս նէրսէսի տրած բանը սաղ արարած աշխարքը դիդէ ու քանի էս շիոլէն կայ, նրա անուամն էլ մըտենէրէմէս չի էհայ: Լաւ բան կամեցաւ, գըւխին էլ դուս տաբաւ, վըայ էրի: Ա՛յ մարթի, այ Հոքէուր—Տէր: Մէր խալխն էլ կի քամագ է աբի նըբան, ամէն լաւ բանէրուումը քամագ ին սըբանք ու կուլին էլ համաշա, թէ խէլօք ժաժ գայ նըբանց միջը:

Շկոլերու պէս միզ համա հիմի էնէնց խիտ հարկաւոր բան չկայ: Առաջ հացն ու իժուտ ուսումը, հացն ու ուսումը, էս երկու բանն է, վաւր մեր ասկը կու կենդանանէ, մարթկերանց հետաքուումը կու գըրգռէ: Էտուու համա էլ օվոր իր ասկի համա լաւ բան գուզէ ու մեր խալխի սրբտացուն է, օվ ինչքան կանայ, պիտի շկոլերու համա փիքր անէ: Իփոր շատ շկոլէք կուննենանք, մեր պիդնաւրնիրր կու շատանան, էն վախտը մեր ամէն բանն իր ճամբէն կու գընինէ:

Աստուձ հոգին լուս չինէ, այ հերու մեռաւ մեր քահկուումը Օսէփ Ալինդօվճ ու մօդ 7, 8 հազար թուման թուղէ թողն մեր հասու շկոլի համա: Էտ թահար մարթը, վաւր օվ գիդէ հազար մինկ էլ ունենայ ու գըժուվկի փահ ըլի, էտ բանով գոհանումը տիղ կու ճարէ: Գանի՞ օխնոզ, քանի՞ լաւ իշող կունենայ: Էս ու իմ Աստուձը, դօչող մարթ: Բաս ախար ի՞նչ է էս մեր կինքը, ինչայո՞ւ ինք, —կի՛, խըմի՛, հագի՛, մաշի՛, քունի՛, քէփ արա՛, —պիսի անցօրական բանիր է: Էտունք էլ լաւ չի՛ ըլի, վաւր չանէ մարթ, մազրամ քանի կինդան է, իր հոգին էլ պիտի միտը բերէ, հետի բան պիտի անէ, հալբաթ թէ ձեռնեմէն էլ դուս գուգայ, վաւր իր մեռնելու էդնէն էլ իշվի: Էս Ալինդօվճ թահաղնէլու օրը, կօսիս թէ հասնիք էր ասկի համա: Մեռիլը տանեմէն դուս բերելու վախտը մեր համքրնիրը մէ հետի փափախալի բացըը «Աստուձ օղորմի քու հոգուն» էին ասում, վաւր Աստուձ չէր էլ ուզիցի, կու իմանէր: Շատի ձէնը, կօսէ, Աստուձ էլ է լըսում:

Ղուրթ վաւր վընայոր ասած է, մարթու դըժուվկն էսախէվէտ է իմանալում: Գանի՞ Ալինդօվճ պէս ու նըբամէն ուխրո հարուստ մարթիք էն մեռնում, ամա գընում էն ու միթամ թէ իսկի չէին էլի աշխարքի վըայ: Խամ չըպիտի մեռի էդնէն մարթ վազ բան ասի, ամա էն մեռնէն էլ իր կինդան վախտը, պիտի լաւ բանիր ըլի արի, վաւր վազ չասնին, օ՞վ ի՞նչ անէ, մէնակ իս խօմ չիմ ասում: Թահաղ օրը կի մէ էնէնց ձէն էն վիր անում, միթամ վազն իր ունեցածի իրիք փահէմէն մէ փահին է անպէրց արի շկոլի համա, վաւրը կէսը, —ամա դուն էլ չը մեռնիս, դիմի ուստ բանիր է, թուրմէ դուն մի՛ ասի մեռելին պատիւ տալու համա էն սարքում էտ թահար բանիրը: Կօսիս թէ խալխի սիրան էլ իմանում է էտ բանիրը. մէկի բերանը չէ ղօռում էն թահար վախտը մէ սըրտալի օղորմի ասէ. մէ օրինաւոր վընէն լաց ըլող էլ չէին ունենում, —մի՛ ասի, էն էլ մէ պատիւ է մեռելի համա: Շատ ասին, շատ ասին, պիտին ասի, թէ վընան փուղատէրի պէս լաւ տուն սըղվ չունէր քահկումը. ի՞նչ

դուս էկաւ, տունը կու քանդըվի, կհայ... Ղուրթ է, փուղը շատ սիրկան է, մը պըտաի Աստուձն է, կօսէ,— լա՛ւ, դաբուլինք, կինդան վախտը չալիշ էկար, դա- պցիր, մինձ կաեանք կատկցիր, էն վախտը քու ասկին վունչիչ օգուտ չիս տալի. էտ էլ ասինք վունչիչ, մարթ իր ձեռին է բանկցնում փուղը, աշխատանքնիր է ա- նում, թող անէ. ամա իմոր տեսնում իս, վուր մեռնե- լուտ սահաթը մոտ է կինում. մահինի պուռն իս նընդ- դէ, տեսնում իս վուրթի էլ չունիս, խիտ պահաս բան է, քու արիվը դիպչնայ, վուր ասկի համա վունչիչ չը թողնիս ու էնէլ ինչը թողնիս պիտի գաւի գա- ռարէք ու զըգըզելու բանիր ըլի: Ի՞նչէ, ազբա- թըխէր, փուղա էլ ու արնիրա էլ յիդըտ խոմ չիս տանի, մեռնում իս, գընում իս... զարն էլ իս հոսի թողնում ու զարբարն էլ, կառեանիրն ու սարաէքն էլ—վունցոր դարդակ էկիլ իս, էնէնց էլ դարդակ գը- նում իս: Վուրթիք չունիք, ամա վուր շկոլի համա ըլիք անդերց անում ձեր կաեանքի չարէքն էլայ. հնդըլայ շկոլի աշկըրանիրը դիպ մէտի ձիր վուր- թիք կու գառնան, ձիր հոքու վուրթիք կուիշվին: Ափենդօվը կի, Աստուձ հոքով խրթարէ, անվուրթի՝ վուրթատէր գառաւ:

Աստուձ վուր տալիս է մարթուն, խոմ չէ ասում, թէ գընա, աշխըրքի ղուղը դուս ծրծէ, քէվ արա, լաւ հաքի, լաւ մաշէ ու էլ օչխվի համա փիքը մի՛ քա- շի: Էս աշխարքը վուր է, մէ փորցելու տիղ է միզ հա- մար: Սրան է տալի Աստուձ, նրան է տալի ու հնդանց վարատուրդ է անում: Թէ օվ ի՞նչ թահարն է բանեց- նում փուղն ու կաեանքը: Հէրը լաւ չըբանեցրուց փուղիրը, Աստուձ նրա վուրթուտմէն դիպուն մէտի խը- լուտմէ ու ան խիլքն է գլխեմէն հանում վուր հօր կա- եանքը դիպ ցաք ու ցրիւ ըլի: Իժում էն փուղերն ու- րիշին է տալի Աստուձ, նրան է փորցում: Թէ տեսնինք վո՞ւնց կու բանեցնէ նա էն փուղերը: Էհէնց է, աղա Ջան, էս աշխարքի բանը:

Արաին էս է, վուր միր փուղատէրնիրը, քանի կեն- դան ին, վուրն ինչիր է դարստում ասկի համար, վուրն ի՞նչ, վուրն ախչկերանց շկոլի համա է դարսողուԹին անում, վուրը վուրփերու ու խրխճներու համա ու վու- րը մինձ դըրքատնիր է խոստանում Թէ կու շինին մի- Թամ: Վիրջը կի ի՞նչ է դուս գալի, մեռնում ին, գը- նում ին ու իրանց դարսողուԹննիրն էլ յիդն ին տա- նում, գերեզմնում Թաղում: Ուզենալն ու Թան- խէք տալը չէ բանը, բանը անիլն է: Նադդ բան ա- սէք, նադդ. խոմ գիդիք, մինք նադդ բան կու սի- րինք, պարծենալով բան չի դառնայ: Միզ դուդին խա- փի միԹամ ու իրանց ղուխը սիրիլ տայ: Էտենց չէ, պարուն. վունցոր գոր դիդիք, Թէ վունչիչ չէք ու- զի տայ, էլ նաղուզ տալն տիղ ձէն իք դըցում, Թէ էս պիտիմ անի, էն պիտիմ անի: Լաւ բան անում իս, արա. քու արած բանովը կու ճանչնան քիզ, էլ խա- փիլն ի՞նչէ բաս: Աստուձն ամէնով չին տեսնում, ամա խիլքով կի ճանչնում ին: Նրա արած բաներովն իմա- նում ինք. վուր Նա միր սիլածոլն է էլի: Բաս վո՞ւնց դի- պիս: Այ Թէ լաւը գուշիս, պընա քիզ համա մունջի մունջ լաւ լաւ բանիր արա ասկի համա. տես, Թէ վո՞ւրդանցեմէն է լուս նընգնում քու անումը: Բաս ա- նում ճարիլը դարդակ խոսելով խոմ չի՞ ըլի: Էրնկ նըրանց, կրանի նրա հոքուն, օվոր լաւ բանիր է ա- նում ու ինքը կի Թախ կինում. խսկի չէ էրեվում Թէ ուրուքմին կայ, Թէ չէ: Ամա հազար էլ վուր չէ- րեվան, նրանց արած բանիրը խոմ էնդի է: Այ քիզ լաւ օրինակ միր Ռոստոմը: Շատ էլ վուր իր անումը Թախկացնէ ու մինք էլ վուր Թաքցընինք, դիխուէնքն էլ գիդին, Թէ օ՞վ է ու ինչիր է անում հաերու հա- մա: Թէ խիլք ունէ մարթի, լաւ բանով պարծենայ, Թէ չէ, ի՞նչ է միր էս կինքի բանը...էսօր կանք, է- քուց չըկանք... ի՞նչ պիտինք դուս տանի էս քարու- քանդ աշխըրքումէն, սաւսի լաւ անումը...:

Շատ հիւռու գընացինք...հա ուսուամարանի վրայ էինք խոսում, մինձ ուսուամարան շինելու վրայ: Ղուրթ է, կօսէ, էսղանցի միր Հաու շկոլէն լաւն է, ամա իմ վուրթին աստում է, մէ ուրիշ մինձ ուսուամարան էլ պի- տի, կօսէ: Էտ շկոլում վուր ղուրսը Թամամ կանին, կէհան էն ուսուամարանն ու էնդի էլ կու սորվին: Էտ մինձ ուսուամարանում, կօսէ, կու սորվին միր աեր- տերացու ու վարԹապետացու ջէհէլնիրը: Էտ ուսուա- մարանի շինիլը միր հիմիկվայ հոքէուր—Տիրուչ բանն է: Ներսէսը շինից էս Հաու շկոլէն, անումն էլ էգի Ն ր- սէսի շկոլա. միր հիմիկվայ Մաթէուսն էլ կու շինէ, կօսէ, մինձ ուսուամարանը, Աստով անումն էլ կու դընինք՝ Մաթէոսի մինձ ուսուամարան: Շինէ կի ու վուրդ իոր գուղէ շինէ. գուղէ էրեվան, գուղէ Ղարաբաղ, մէ խոսկով հաունցումը վուրդ իոր գուղէ ըլի: Հախ Աս- ծու, ինչորի հիմի վուրդի էլ խոսկածկուԹին է էլի միր հոքէուր—Տիրուչ վրայ, դիպ դրա գովքն ինք իմացի, դիպ դրա լաւ բանն ինք իմանում. մինք էլ կու խընդ- րինք Աստնումէն միր միզաուր բերնով, վուր դրան դիպ լաւ տայ: Աստուձ շատ կինք տայ դըրան միզ համա ու վուրնոր միր ասկի ու հաւսի համա խէյրաԹ բա- նիրն է, էն անիլ տայ դըրան: Աստով, ումիկ ունիմ Աստնումէն, վուր միզ չը կորցընէ, գուշմի սըրտով չա- նէ: Դուն ասա, Թէ դուրթ էն իմ վուրթու աստա- մինձ ուսուամարանն էլ շինից գա, դընայ ու դընայ, վուր էտուէն աւելն էլ վունց հոքու համա բան գուղէ ու վունց մարմնու համա, վուր կօսին, դրուստ ասին է ի-

տիզը լուս կու դառնայ: Ցասկ միր Հոքէուբ—Տէրը, Թէ գըժար է ետ Թահար ուսուսմարանի շինիլը, մինձ փուղ պիտի.. Միր խալխը գիւղ փուղ չի.. Ինքը կամաւրվի, Թէ չէ միր խալխը ջէր շատ ետ Թահար բանիր ունէ շինելու, շինուսմէ էլ ու կու շինի էլ Աստով.. Աստուձ միր կուռնըլի, Թէ չէ հալբաթ, մեռնիմ նրա օղորմութէնին, չի կորցընի միզ:

Ա.մա՛, իս ու իմ Աստուձը, կասկ, վուր ետ մինձ ուսուսմարանը շատ հոքուն կու վրայ հասնի հիմիկվայ վախտը: Վունցոր ի՞նչ ասիմ, վունցոր ամառն էն շուք կրակ վախտը սափի վրայ հունձ անող մըշակի համա, վուր էն կրակ վէր ածող արեգագումէն դիւղ քրտնքուսն օղըղվումէ ու բերանը պարպըքվում, բայց ու խուփ է անում էրաշտութէնի վախտվայ գրըգան պես. վունցոր նրան մէ Թաս սառը ջուրն ու մէ սառը հովը շինչի կու բիրէ, կու հովցընէ ու ուժ կուտայ նըրան, հնէնց էլ էն Ուսուսմարանն ու մինձ մինձ շկոլէքը կուլին հասուց ասկի համա:

Էս մինձ ուսուսմարանի վրայ վուրթիս շատ էրգար խոսեցաւ: Էտ ու սուսմարանը, կասկ, էն Թահար ուսուսմարան չի ըլի, վունցոր հիմիկվայ միր ուսուսմարաններն է: Սորվեցնում էին միր ուսուսմարաններումը հիմի՝ փերահանութէին, ձարտասանութէին, տրամաբանութէին ու էլ վունչիչ, ի՞նչ օգուտ, կասկ, ի՞նչ կու գուս գայ էտ ուսուսմանին: Աշկըրտներն ինչոր շնուրք ունին էն էլ կի կորցընում էին կարգէ ի գուս բանիր սորվելմէն, անգիր անելմէն: Էն միր մինձ ուսուսմարանումը կու սորվեցնին, կասկ, հոքէուբական մարթուն հարկաւր բանիրն էլ աշխարականին հարկաւրն էլ, գիղըցու պիտանացուն էլ ու քախկրցու համա պէտականը: Հոքէուբականը լաւ գիղըցի, լաւ քախկրցի, լաւ փեշաքար, լաւ վաճառական, լաւ հեջիմ պիտի ըլի: Էտու համա էլ էն Թահար ուսուսմ պիտի սորվի, վուրնոր հարկաւր է միր գիղըցուն, քախկրցուն, աշխարականին, հոքէուբականին, վաճառականին, փեշաքարին ու հնգմին: Վուր միր հոքէուբականը քախկրցու չիդ քախկրցի ըլի, գիղըցու չիդ գիղըցի, փեշաքրի չիդ ու վաճառականի չիդ վաճառական: Ուսուսմարանը կուլի հասուց մինձ ուսուսմարան, հնդանց կու փըռվի հասու ուսուսնի ամէն տիպ վուրդիոր հայ կայ հիմի: Հիմի շատ տիղ Հայերը ուսուսմ չեն սորվում, կասկ, վուրը փառանդըստուն, վուրը նեմեցի իրգրուսնի ու ուրիշ տիղերումը: Ամա էտ ուսուսնին էն Թահար ուսուսմ է, վուր հայերու համա շատ սահաւ օգուտ է բերում: Հնստի բանիրու վրայ է փիքր անում հնդանգին եկած հիմիկվայ միր գիղնաւրը, վուր միր խալխն իսկի էրազումն էլ չէ տեսի: Խալխին ծուռն աձկով է մըտիկ տալի, կասիս Թէ միր խուրթ վուրթիքն ըլին, խալխ չը սիրող նրանցմէն հոքով էլ ու մարմնով էլ հիւանդած, ջոդված: Միզ հիմի հասու գիղնաւրնիր չեն հարկաւր, հայերուն լաւ ձանչընողնիր, էն Թահար օմքնիր, վուր միր իրգրընիրը դիմի Թըղվի չափած ունենան, վուր գընայ ու մէ բան գառնայ միզ համա:

Իմոր կու սարքըվի, կասկ, էն ուսուսմարանը միր, Հոքէուբ—Տէրը կու կանչէ ամէն իրգրընկերումէն, Թէ Սատմրոլումէն, Թէ Ռուսեթումէն, Իմիրումէն, Հընդկաստանումէն ու ուրիշ տիղերումէն գիղնաւր հայերը միր մինձ ուսուսմարանումը դաս տալու համա: Ամէն տիղերումէն գիղնաւր հայերը վուր մէ տիղ մօդ կուլին, հալբաթ վուր լաւ դարսողութէին կանան անի հայրու համա: Սատմրոլցին Սատմրոլցիրու հարկաւր բանիրը կու սորվեցնէ ուսուսմարանումը, Ռուսեթեցին Ռուսեթու հայերուն պէտական բանիրն, հնէնց վուր Իմիրցին վուր ուսուսմ սորվի էն ուսուսմարանումը, համ լաւ Ռուսեթեցի հայ կուլի, համ Սատմրոլցի հայ կուլի ու համ լաւ Իմիրցի հայ: Էտենցով էս ուսուսմարանն ամէն հայերուն մէկ կու շինէ, մէ Թահար հոքի կու տայ դիփուներն ու մէ հանգը մըտիկ տալ կու տայ ամէն հայերուն: Էն ուսուսմարանով հայերը շատ առաչ կհան: Հազար վերս հիւռու կուլինք մէկըմէկումէն, տա սըրտով ու մըտիկով անբաժան կուլինք. էն վախտն ամէն հաւ, միակն ու սիրտը մէ տիղ կուլի, հնէնց վուր հիմիկվայ պէս Քախկրցի ու Սատմրոլցի, Հաշտարխանցի ու Թավրիզցի հայր չեն ըլի, դիփուանքը հայր կուլին, Հայաստանի հայր, հաւ վուրթիք կուլին: Էն վախտն էսպանցի հայերու համա Սատմրոլցին էլ փիքրը կհոնէ, Իմիրցին էլ ու Ջուղայցին էլ մէ Թահար կու օտկինք մէկըմէկուն ու սրբտացութէնով կու մըտիկ տանք միրերուն, դիփուանցը:

(Ջեր էլի կայ)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.

Ուսուցիչ կոլլեժսկի Ասեսոր Իվան Տրիֆոնով իչ Խըլամովը բաց է արել Տղերանց պանսիօն Թիֆլիզումը, Սոլոլակի Թաղումը Արաբ օղլու տանը:

Պանսիօնի ուսման ընԹացքը նոյն է, ինչոր սահմանած է գիմնազիոյ առաջին չորս դասատանց համար: Ուսուցիատուութեան ձևն է նախատոզական և համեմատարած վայելուչ կրԹութեան և մտաւոր զարգացման պահանջմանցը:

Պանսիօնի Տեսուչը հաստատուն յոյս ունի, որ նրա պանսիօնը իրա ուսուցըչութեամբը լիովին կ'կատարէ ծրնողաց ցանկութիւնը:

Կոլլեժսկի Ասեսոր Իվան Խլամով.

Հրատարակիչ Հ. ԵՆՋԻԱՃԵԱՆՑ (Ի ՏՊԱՐԱՆԻ Գ.Ա ԵԼԻՐՈՒՄԵԱՆ
Խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ: Հ. ԵՆՋԻԱՃԵԱՆՑ:

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ. 16 ноября 1863 г.
ТИФЛИСЪ